



ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ՝ ԱՂԵՑ

ՍԱՌԱԾԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄԸ

Լյուբլյան բաղաբի (Հարավսլավիա) վիրաբուժական կլինիկայում կյանքի կոչեցին 60-ամյա սառած մի մարդու:

Անցյալ տարվա դեկտեմբերի ուժեղ սառնամանիքների ժամանակ նրան գտել են կիսաբաց շտեմարանում, գիտակցությունը կորցրած: Պուլսը եղել է 30, ներքին օրգանների ջերմաստիճանը՝ 25°C :

Գերթե չորս ժամ տևեց պայքարը սառածի կյանքի համար: Նա համարյա ամբողջապես ընկղմված էր 40°C ջրի մեջ: Այդ ընթացքում անհրաժեշտ էր ձեռքերն ու ոտքերը պաշտպանել տաք ջրից և այն միշտ սառը պահել: Միաժամանակ կատարվում էր արյան ներարկում, արհեստական շնչառություն, թթվածնի մատակարարում: Մոտ չորս ժամից հետո հիվանդի ջերմաստիճանը կարգավորվեց, և նա սկսեց ուշքի գալ: Աջ ոտքը, որ լիովին սառել էր հարկ եղավ անդամահատել: Ուրիշ բարդություններ չեղան: Այժմ հիվանդն առողջանում է:

Փորձը ցույց տվեց, որ ցրտահարվածներին տաքացնելու էֆեկտիվ միջոցը 40°C ջերմությամբ ջրում լողացնելն է:

ՅՐՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄՈՒԼՅԱՏՈՐ

Պարզվում է, որ ցուրտը կարելի է կուտակել: Ինժեներ Հոֆմանը (ԳԴՌ) վերջերս առաջարկել է այդպիսի մի ակումուլյատոր, որի փորձարկումը հաջող է անցել: Դա հերմետիկորեն փակ մի ծրար է, լցված հատուկ մասսայով (որի բաղադրությունը դեռևս հրապարակված չէ): Եթե այդ ծրարը որոշ ժամանակ մնում է սառնարանում (ջերմաստիճանը -20°), ապա հետո 10—12 ժամ շարունակ տալիս է իր սառնությունը: Այդպիսի ծրարը կարելի է օգտագործել ճանապարհին, մթերքներ գնելիս, վերցնել նախաճաշի հետ՝ աշխատանքի գնալիս ուտելիքը թարմ և համով պահելու համար: Ծրարը բավիցս կարելի է լիցքավորել սառնությամբ:

Սպլիտ բաղաբում (Հարավսլավիա) շահագործման է հանձնված բաղաբային աղբը պարտանյութի վերամշակող փորձնական կայանքը:

Կայանքը բաղկացած է աղբը մատակարարող փոխակրիչ ժապավենից, պողպատյա իրերն առանձնացնող էլեկտրամագնիսից, այլ առարկաները պատող էլեկտրոնային սարքից և աղբաղացից: Կայանքը տարեկան կվերամշակի մոտ 35 000 մ³ բափոն և կտա մոտ 7000 տոննա արհեստական պարարտանյութ (կոմպոստ):

Արհեստական պարարտանյութի օգտագործման առաջին փորձերը հիանալի արդյունք են տվել այգեգործության, խաղողագործության և բանջարաբուծության մեջ: Այսպես, օրինակ, ստացվել են դեղձի 300—500 գրամանոց պտուղներ:

Հաշվված է, որ Հարավսլավիայում ամեն տարի բաղաբային աղբից կարելի է ստանալ 2 միլիոն տոննա կոմպոստ-պարարտանյութ, որն իր որակով վզալիորեն գերազանցում է բուսահողին:

ՖԱՆԵՐԱՅԻ ՆՈՐ ՏԵՍԱԿ

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցները ստեղծել են ֆաներայի, այդ թվում բավաշերտ ֆաներայի նոր տեսակներ, որոնք օգտագործվում են ապրանքատար վագոնների շինարարության մեջ:

Այդ ֆաներայի մեկ խորանարդ մետրը փոխարինում է երկու խորանարդ մետր տախտակին: Ֆաներայից պատրաստված վագոններն ավելի դիմացկուն են, և՛ ավելի էժան են նստում: Զանի որ բավաշերտ ֆաներան ծածկված է սինթետիկ նյութով ներծծված հատուկ թղթերով, վագոնները ներկելու անհրաժեշտությունը վերանում է:

Սառնարանային սարքերի համար ինստիտուտի աշխատակիցները պատրաստել են պրահապատ ֆաներա, որը ծածկված է մետաղե թիթեղիկներով: Այդ նյութը աչքի է ընկնում իր բարձր ջերմամեկուսիչ հատկություններով:

Կապարապատ ֆաներաները նախատեսված են ռենտգենյան ապարատների խցերի համար:

ԱՄՆ-ում մշակված է ոսկեզօծման մի նոր եղանակ, որի ժամանակ ոսկեպատվող նյութի մակերեսին պոլվերիկատորով ցանում են միաժամանակ երկու ջրալուծույթ՝ մեկը պարունակում է ոսկու միացություն, մյուսը՝ ուժեղ վերականգնիչ: Այս եղանակը թույլ է տալիս ոսկեզօծել ոչ միայն մետաղը, այլև ապակին, կերամիկան և պլաստմասսան: Միայն թե անհրաժեշտ է դրանց մակերեսը մաքրել լուղերից: Դա կարելի է անել կենցաղում կիրառվող սովորական միջոցներով: Եթե մակերեսը բավականաչափ հարթ է, պատվածքը ստացվում է հայելանման: Հատկանշական է, որ լուծույթները դիմանում են երկարատև պահպանման և չեն պարունակում ցիանիդներ՝ թունավոր նյութեր, որոնք սովորաբար պարունակվում են ոսկեզօծման նպատակով կիրառվող մյուս ռեակտիվներում:



52-րդ էջՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ՝ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. 35 եռանկյուն:

2. Ստորակետ: Կատացվի՝ 2,3:

3. Հաճախ պատասխանում են, թե ավտոբուսի ուղևորներն ավելի հեռու են գտնվում Մոսկվայից, քան հեծանվորդը: Դա, իհարկե, սխալ է, որովհետև հանդիպելով նրանք գտնվում են նույն տեղում և, հետևաբար, Մոսկվայից միևնույն հեռավորության վրա:

4. Ա-ն այսպես էր դատում. «Մեզանից յուրաքանչյուրը կարող է մտածել, որ իր դեմքը մաքուր է: Բ-ն համոզված է, որ իր դեմքը մաքուր է, և ծիծաղում է Գ իմաստունի մրտաված ճակատի վրա: Բայց, եթե Բ-ն տեսներ, որ իմ դեմքը մաքուր է, ապա նա կզարմանար թե ինչու է ծիծաղում Գ-ն, որովհետև այդ դեպքում Գ-ն ծիծաղելու ոչ մի պատճառ չէր ունենա: Բայց Բ-ն չի զարմանում, ուրեմն նա իրավունք ունի մտածելու, որ Գ-ն ծիծաղում է ինձ վրա: Հետևաբար, իմ դեմքը մրտա է»:

5. Պետք է փոքր շղթաներից մեկի օղերն անջատել իրարից (երեք գործողություն) և նրանցով միացնել մնացած 4 շղթաները (ևս երեք գործողություն, ընդամենը՝ 6):

6. Մակընթացություն ժամանակ և՛ նավը, և՛ պարանասանդուղիները ջրի հետ միասին վեր կբարձրանան:

7. 72 ժամ հետո նորից կլինի գիշերվա 12-ը, իսկ գիշերն արև չկա (բացառությամբ բևեռային օրերի):

8. Տեղափոխությունը կատարվում է հետևյալ հերթականությամբ.

ա) Գայլին ու կաղամբը թողնելով ափին մարդը այժին տանում է մյուս ափը.

բ) Վերադառնում, վերցնում է կաղամբը և նույնպես տեղափոխում մյուս ափ:

գ) Այնտեղ թողնելով կաղամբը այժին ետ է բերում առաջին ափը:

դ) Այժին թողնելով առաջին ափին, գայլին տանում է մյուս ափը, ուր կաղամբն է:

ե) Վերադառնում, վերցնում է այժին ու տեղափոխում մյուս ափը:

Այդպիսով տեղափոխությունը բարեհաջող է վերջանում:

9. Առաջին հայացքից խնդիրը բարդ է թվում: Բայց եթե փոքր-ինչ խորը մտածեք, ապա անմիջապես գլխի կընկնեք, որ ճանճն առանց կանգ առնելու, թուել է ուղիղ 3 ժամ, հետևաբար, թուել է 300 կմ: